600.0715.14.12.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2018 թվականի №715Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №105Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100Ն օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, հաշվի առնելով «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 13-ի և նոյեմբերի 28-ի գրությունները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն որոշմամբ կատարվող փոփոխություններն անհրաժեշտ են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պատշաճ կատարումն ապահովելու համար՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Վայոց Արև» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №105Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2019 թվականի մարտի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը» բառերով.
   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝

      ա. հավելվածի 6-րդ կետում «993.6» թիվը փոխարինել «993.63» թվով.

      բ. հավելվածի 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ».

գ. հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. «Վայոց Արև» արևային էլեկտրակայանի տեղակայված հզորությունը 993.63 կՎտ է:».

դ. հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2018 թվականի նոյեմբերի 9-ի №01-1341 գրությամբ ներկայացված թիվ 184408368 բանկային երաշխիքի համաձայն Հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի դեկտեմբերի 15-ից, բացառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
14 դեկտեմբերի 2018թ.